ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 23-26-Ը ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան), 2019թ. օգոստոսի 23-26-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Իրանի Իսլամական Հանրապետության Էներգետիկայի նախարարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   Գործուղումը նախատեսված էր «Իրան-Հայաստան 400 կՎ էլեկտրահաղորդման 3-րդ օդային գծի և «Նորավան» ենթակայանի» կառուցում ծրագրի շրջանակներում առաջացած հարցերը քննարկելու համար:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   «Իրան-Հայաստան 400 կՎ էլեկտրահաղորդման 3-րդ օդային գծի և «Նորավան» ենթակայանի» կառուցում ծրագրի շրջանակներում 2011թ. հունիսի 26-ին Իրանի արտահանման զարգացման բանկի հետ ստորագրված N900/M/ARM/09 ֆինանսական համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգում:
   «Իրան-Հայաստան 400 կՎ էլեկտրահաղորդման 3-րդ օդային գծի և «Նորավան» ենթակայանի» կառուցում ծրագրի շրջանակներում 2012թ. փետրվարի 23-ին «Sunir International FZE» ընկերության հետ ստորագրված փոխառության պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգում:
   «Իրան-Հայաստան 400 կՎ էլեկտրահաղորդման 3-րդ օդային գծի և «Նորավան» ենթակայանի» կառուցում ծրագրի շրջանակներում Իրանի արտահանման զարգացման բանկի վարկի չօգտագործված մասի դիմաց վճարման ենթակա տոկոսների և վարկի ապահովագրության փոխհատուցում «Sunir International FZE» ընկերության կողմից:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

2019թ. օգոստոսի 24-ին հանդիպում է տեղի ունեցել ԻԻՀ էներգետիկայի նախարարի տեղակալ պարոն Հայերիի հետ:
2019թ. օգոստոսի 25-ին հանդիպում Իրանի արտահանման զարգացման բանկի նախագահ պարոն Ալի Սալեհաբադիի հետ:
2019թ. օգոստոսի 25-ին հանդիպում Սանիր ընկերության գլխավոր տնօրեն պարոն Համիդռեզա Սալեհիի հետ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

«Իրան-Հայաստան 400 կՎ էլեկտրահաղորդման 3-րդ օդային գծի և «Նորավան» ենթակայանի» կառուցում ծրագրի շրջանակներում 2011թ. հունիսի 26-ին Իրանի արտահանման զարգացման բանկի հետ ստորագրված N900/M/ARM/09 ֆինանսական համաձայնագրի լրացուցիչ համաձայնագիր 4-ի ստորագրում, որով համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2020թ. օգոստոսի 9-ը:
«Իրան-Հայաստան 400 կՎ էլեկտրահաղորդման 3-րդ օդային գծի և «Նորավան» ենթակայանի» կառուցում ծրագրի շրջանակներում 2012թ. փետրվարի 23-ին «Sunir International FZE» ընկերության հետ ստորագրված փոխառության պայմանագրի լրացուցիչ համաձայնագիր 6-ի ստորագրում, որով պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2020թ. օգոստոսի 9-ը, ինչպես նաև Իրանի արտահանման զարգացման բանկի վարկի չօգտագործված մասի դիմաց վճարման ենթակա տոկոսների փոխհատուցումը և վարկի ապահովագրության գումարի վճարումը ստանձնել է «Sunir International FZE» ընկերությունը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հետագայում հետամուտ լինել քննարկված հարցերի իրագործմանը:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

29 օգոստոսի 2019թ.